

Ապավինե՛նք մեր ներուժին

«ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐԸ

ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացի ակտիվացում
Միջազգային կապերի հաստատում և սերտացում
Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնության ամրապնդում
Հանրապետության պաշտպանունակության և անվտանգության գորացմանը նպաստում

Սահմանադրական բարեփոխումների միջոցով քաղաքական համակարգի արդյունավետության և Ազգային ժողովի գործառնությանը դերակատարման բարձրացում, պետական կառավարման և դատական համակարգերի լավարկում

Ժողովրդավարական և իրավական պետության ամրապնդում

Քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստում, ազատ և մրցակցային լրատվական դաշտի զարգացման խթանում

Կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված ջանքերի շարունակում և բազմապատկում

Տնտեսական աճի բարձր տեմպերի շարունակականության ապահովում՝ արդյունաբերության, էներգետիկայի, գյուղատնտեսության և այլ ճյուղերի զարգացման քաղաքականությամբ

ՓՄՁ զարգացման ծրագրերում նոր գործիքների կիրառում՝ նրանց ապահովագրելով արտարժույթային տատանումների բացասական ազդեցությունից

Տնտեսվարող սուբյեկտներին անհարկի տույժ ու տուգանքներից ապահովագրում օրենսդրական փոփոխությունների միջոցով

Գյուղատնտեսության բնագավառում պետական երկարաժամկետ ծրագրերի իրականացում և ցուցաբերվող օժանդակության ընդլայնում, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում

Զբոսաշրջության զարգացման խթանում

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն աջակցում

Ենթակառուցվածքների բարելավման ծրագրերի շարունակում, յուրաքանչյուր քաղաքացու համար կանոնավոր ջրամատակարարման ապահովում

Տարածքային համաչափ զարգացմանը նպաստում

Տեղական ինքնակառավարման մարմինների իրական անկախության բարձրացում անհրաժեշտ բարեփոխումների միջոցով

Ժողովրդագրական իրավիճակի բարելավում, բնական և մեխանիկական աճի խթանման ծրագրերի շարունակում

Ստեղծվող արդյունքի վերաբաշխում՝ սոցիալական արդարության սկզբունքներին համապատասխան

Որպես սոցիալական քաղաքականության գերակա ուղղություն՝ նոր աշխատատեղերի ստեղծում

Թոշակառուներին տրամադրվող սոցիալական երաշխիքների պայմանների շարունակական բարելավում

Հիփոթեքային արտոնյալ նոր քաղաքականության իրականացում գոհված ազատամարտիկների երեխաների, հաշմանդամների, փախստականների և սոցիալապես խոցելի այլ խմբերի համար

Զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավում

Սպայական անձնակազմի (նաև կենսաթոշակառու) ընտանիքներին սոցիալական նոր երաշխիքների տրամադրում

Բազմազավակ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման պետական նոր քաղաքականության իրագործում

Երիտասարդ ընտանիքներին աջակցության ծրագրերի զարգացում

Առողջապահական ծրագրերի շարունակական բարելավում

Սոցիալապես խոցելի խմբերի համար մատչելի առողջապահության պայմանների բարելավում

Հասարակական-քաղաքական գործընթացներում երիտասարդության մասնակցության աստիճանի բարձրացում, նրանց ազգային դաստիարակությանն աջակցում

Կրթական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովում

Երիտասարդ գիտնականների և մասնագետների վերապատրաստում և որակավորման բարձրացում, միջազգային համագործակցության նպաստում

Կիրառական գիտությունների զարգացման խթանում

Հայ Առաքելական եկեղեցու դերի, քրիստոնեական արժեքների պահպանմանն աջակցում

Մշակույթի և սպորտի զարգացման խթանում

Մշակութային արժեքների վերականգնում, պահպանում և քարոզում

Զանգվածային սպորտաձևերի խթանում, առողջ հասարակության քարոզում

Միբելի՛ հայրենակից

«Ազատ հայրենիք» կուսակցությունը՝ որպես Արցախի քաղաքական դաշտի առաջատար ուժ, տասը տարիների ընթացքում լրջագույն դերակատարում է ունեցել պետության զարգացման գործում: Արցախցին մեծապես վստահել է իր երազանքների իրագործումը նաև մեր կուսակցությանը: Արդյունքում գրանցվել են բազմաթիվ հաջողություններ հանրապետության կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ ապահովելով տնտեսական տարեկան բարձր աճ և բնակչության կենսամակարդակի կայուն բարելավում:

Այնուամենայնիվ, առկա են նաև բացթողումներ և խնդիրներ, որոնց լուծմանը միտված կլինի մեր առաջիկա գործունեությունը: Հավաստիացնում ենք, որ կուսակցության կուտակած փորձն ու ներուժն ի սպաս են դրվելու այդ նպատակի իրագործմանը: ԱՀԿ-ն պատրաստ է շարունակելու քաղաքական պատասխանատվություն ստանձնել և հուսալի հենարան դառնալ մեր պետության և հասարակության առաջընթացին:

Միբելի՛ ընտրող,

Այսօր կրկին ընտրությունների նախաշեմին ենք: Քո դատին ենք հանձնում մեր անցած ուղին և կատարած աշխատանքը, ըստ որի կկողմնորոշվես քո ընտրության մեջ: Մեր գլխավոր նպատակը արցախցու վստահությունն արդարացնելն է՝ հայրենիքը խնդիրներից ազատելու պատասխանատու ճանապարհին:

Ակնկալում ենք Արցախի ընտրողների քաղաքացիական բարձր գիտակցության դրսևորում և ընտրություններին ակտիվ մասնակցություն. Դա է երազանքի պետության կառուցման հենասյուներից մեկը: Տեր կանգնի՛ր քո քվեին և պահանջի՛ր արդյունք...

Սեփական ուժերով, կամքով ու երազանքով վերակերտե՛նք մեր ազատ հայրենիքը:

Հույս Հավատ Հայրենիք

«ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔ»

կուսակցություն